# Հ Ր Ա Մ Ա Ն N 383-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

**«25» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 Թ.** **ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

ԷԴԳԱՐ ԱՐՄԵՆԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 12-33.3-Ղ3-1) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 3-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 7-րդ կետը, ինչպես նաև Արդարադատության նախարարության գնումների կազմակերպման և տնտեսական ապահովման վարչության պետի (ծածկագիր՝ 12-33.3-Ղ3-1) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հարցազրույցն անցկացնող հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբեր 23-ի եզրակացությունը և Է. Հովսեփյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Էդգար Արմենի Հովսեփյանին 2020 թվականի սեպտեմբերի 28-ից, 12 ամիս փորձաշրջանով, նշանակել Արդարադատության նախարարության գնումների կազմակերպման և տնտեսական ապահովման վարչության պետի (ծածկագիր՝ 12-33.3-Ղ3-1) պաշտոնում:
2. Փորձաշրջանի ընթացքում Է. Հովսեփյանի փորձաշրջանը համակարգող նշանակել Արդարադատության նախարարության անձնակազմի կառավարման վարչության պետ Վարդուհի Սուրենի Խաչատրյանին:
3. Աշխատավարձը սահմանել՝ 310 858 ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի:

9/25/2020

X 

Rustam Badasyan

**ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ**